ԵՄ ՀԱՅԱՍՏԱՆ – ԹՎԻՆԻՆԳ ԾՐԱԳԻՐ
Գործողություն 6.7

Դանիայի վիճակագրության հաշիվների կազմման փորձը

Ջրի հաշիվներ

Երևան, 2017թ. փետրվարի 13-15

STATISTICS DENMARK

Պարտադիր արդյունք

Սույն գործողության պարտադիր արդյունքը ՊԱ7

Կազմված ջրի հաշիվներ (2017թ. հուլիս)

Չափանիշներ

- Տվյալների աղբյուրների գույքագրում (հասանելիություն, տեղեկատվական հոսք) սահմանված ջրի հաշիվների համար (2016թ. ապրիլ)
- Ջրի հաշիվների մշակված մեթոդաբանություն (2017թ. հունվար)
- Հանդիպում շահառուների հետ (2017թ. հուլիս)
- Կազմված ջրի հաշիվներ (2017թ. հուլիս)

6.7 առաքելության նպատակը և սպասվող արդյունքը

Նպատակը

- Դանիայի վիճակագրությունում ջրի հաշիվների կազմման փորձը
- ՀՀ ԱՎԾ կողմից ԻՍՏԱՏ-ի աջակցությամբ ջրի հաշիվների կազմման կարգավիճակի քննարկում, ընթացիկ խնդիրների և խոչնդոտների վերհանում
- ՀՀ ԱՎԾ-ում ջրի հաշիվների ֆինանսական բաղադրիչի ներկայացման մեթոդաբանական մոտեցումների սահմանումը
- ՀՀ ազգային հաշիվների համակարգում ջրի հաշիվների դերը և նշանակությունը, կիրառման շրջանակը
- Ջրի հաշիվների վերջնական արդյունքների հրապարակում (ձևաչափ, բովանդկություն, հաճախականություն և այլն)

Սպասվող արդյունք

- Փորձագետի առաջարկություններով առաքելության զեկույց Դանիայի վիճակագրության տեսանկյունից

ԻՍՏԱՏԻ հետ հաջորդ առաքելությունները.

- 6.5. Ջրի հաշիվների կազմում II (2017թ. մարտի 27-30)
- 6.6. Ապագայի համար առաջարկությունների և ձեռքբերումների վերահսկում (2017թ. մայիսի 22-25)

Եզրակացություններ

- Բնապահպանական տվյալների հասանելիության հետ կապված լավ համագործակցություն նախարարությունների/պետական գործակալությունների միջև
- ՀՀ ԱՎԾ-ն լավ տվյալներ ունի ջրի ֆիզիկական հաշիվների վերաբերյալ
- ՀՀ ԱՎԾ-ն կառուցողական երկխոսություն է վարում այն տնտեսական բաժինների հետ, որոնք կապ ունեն ջրի ֆինանսական հաշիվների տվյալների հետ
- Իտալացիների հետ ջրի հաշիվների ընթացիկ մշակման վերաբերյալ ընդհանուր տպավորությունը շատ լավ է
- SEEA ջրի հաշիվների աղյուսակները տալիս են լավ և համակարգային պատկերացում ջրի հաշիվների վերաբերյալ, սակայն աղյուսակները հեշտ չէ հասկանալ և դժվար է դրանք հաղորդակցել սպառողներին

Առաջարկություններ (1)

- Շարունակել վարչական տվյալներ տիրապետողների հետ աշխատանքը ստանդարտացված համաձայնագրերի (Փոխհամաձայնեցման Հուշագրեր) ուղղությամբ՝ տվյալների փոխանակման վերաբերյալ
- Շարունակել մշակել ջրի հաշիվները՝ թվինինգ ծրագրի շրջանակներում իտալացիների հետ՝ նախապես պլանավորածի համաձայն
- Ուսումնասիրել և նկարագրել տվյալները “ջրամատակարարման համակարգում ջրի տրանզիտային կորուստների վերաբերյալ ”(Աղյուսակ 3)
- Ընդհանուր առմամբ բարելավել տվյալների որակը և մանրամասների մակարդակը

Առաջարկություններ (2)

- Գրել ներքին ուղեցույց բնապահպանական հաշիվների արտադրման և տարածման վերաբերյալ
  - Գործընթացների, հաշվարկային մեթոդների, տարբեր աղբյուրներից ստացված տվյալների համադրման եղանակների փաստաթղթավորում
  - Նպատակն է ապահովել կայունություն և համապատասխանություն

- Հաստատել տարեկան հանդիպումներ (կառավարող կոմիտե) ներքին և արտաքին շահառուների հետ՝ բնապահպանական տվյալների նկատմամբ կարիքների և ապագա զարգացման տեսլականի առնչությամբ